ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ և ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1992թ. օգոստոս - 1993թ. մարտ)*

Տարոն Հակոբյան

Բանալի բառեր՝ ԼՂՀ Գերագույն խորհուրդ, ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտե, Արցախյան հիմնախնդիր, ԼՂՀ Նախարարների խորհուրդ, բանակցային գործընթաց, ինքնապաշտպանության ուժեր:

1992թ. հունիսի 2-6-ը տեղի ունեցած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) առաջին գումարման Գերագույն խորհրդի (ԳԽ) առաջին նստաշրջանից, ինչպես նաև Ադրբեջանի կողմից անսպասելի և շատ կարճ ժամանակամիջոցում Շահումյանի ու Մարտակերտի շրջանի մի մասի բռնազավթումից հետո ԼՂՀ և Հայաստանի Հանրապետության (ՀՀ) իշխանությունների միջև փոխհարաբերությունները մնում էին չհստակեցված և մոտալուտ լիցքաթափման հույսեր չէին ներշնչում: Դրանից ելնելով դեռևս 1992թ. հուլիսի 18-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի (ԳԽ) նախագահության նիստում քննարկվեց ՀՀ-ԼՂՀ փոխհարաբերությունների հարցը: Հաշվի առնելով երկու հայկական հանրապետությունների փոխհարաբերությունների նման վիճակը, ինչպես նաև ելնելով արցախյան հիմնահարցի ըմբռնման գործում պաշտոնական Երևանի դիրքորոշումը պարզելու անհրաժեշտությունից՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշում կայացրեց՝ ՀՀ իշխանությունների հետ բանակցություններ սկսելու նպատակով ՀՀ ուղարկել ԼՂՀ ԳԽ նախագահության պաշտոնական պատվիրակություն՝ հետևյալ կազմով. Գ. Պետրոսյան, Վ. Հակոբյան, Վ. Աղաբալյան, Վ. Ալեքսանյան, Կ. Բաբուրյան, Վ.Ղազարյան, Հ. Խաչատրյան[1]:

Բանակցությունների ընթացքի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ, սակայն, հաշվի առնելով այդ ժամանակաշրջանի որոշ քաղաքական գործիչների վկայությունները[2] և ուսումնասիրելով հուլիսի 27-ի ԼՂՀ ԳԽ նախագահության նիստի սղագրությունը, որտեղ ներկայացված են ՀՀ իշխանությունների հետ բանակցած ԼՂՀ ԳԽ նախագահության պաշտոնական պատվիրակության անդամների կարծիքները, գալիս ենք այն եզրահանգման, որ ՀՀ նախագահը ձգտում էր ձերբազատվելու ԼՂՀ ԳԽ նախագահության «անհնազանդ» անդամներից՝ պահանջելով ստեղծել մի ռազմաքաղաքական կամ պետական խորհուրդ եւ նրան փոխանցել օրենսդիր ու գործադիր մարմինների բոլոր պարտականությունները: Եվ կարելի է կռահել, թե ինչու օգոստոսի 11-ին հանրապետության Նախարարների խորհրդի (ՆԽ) նախագահ Օ. Եսայանը դիմեց ԳԽ նախագահությանը՝ իր հրաժարականի հարցը քննարկելու խնդրանքով: Նա իր այդ քայլը բացատրում էր իշխանության գոյություն ունեցող կառույցների և ռազմական իրավիճակի պահանջների անհամապատասխանությամբ և առաջարկեց մինչեւ 1992 թ. վերջը հանրապետությունում ռազմական դրություն մտցնել, ինչպես նաև ստեղծել ինչ-որ մարմին և ԼՂՀ ԳԽ-ի ու ՆԽ-ի լիազորությունները հանձնել այդ մարմնին : Իսկ հաջորդ օրը՝ օգոստոսի 12-ին, նույն՝ հրաժարականի հարցով երկրորդ անգամ ԼՂՀ ԳԽ նախագահությանը դիմեց նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը, սակայն նախագահությունը դարձյալ որոշեց մերժել Գ.Պետրոսյանի հրաժարականի դիմումը :

1992 թ. օգոստոսի 15-ը դարձավ ԼՂՀ-ի պատմության մեջ մի նոր ուղենիշային տարեթիվ. այդ օրը տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ և ՆԽ համատեղ նիստը, որը պետք է վճռեր ՆԽ նախագահի հրաժարականի հարցը և լուծում տար ՀՀ նախագահի՝ մի նոր մարմնի

---

* Հոդվածն ընդունվել է 11.12.2018:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ պատմության ամբիոնը:

ստեղծման պահանջի հետ կապված մի շարք խնդիրների [3]: Ընդունվեց ԼՂՀ Նախ նախագահ Օ. Եսայանի հրաժարականը: Երկրորդ հարցի վերաբերյալ եղան բազմաթիվ հարամերժ կարծիքներ, և, ի վերջո, ընդդիմադիր կողմերը եկան փոխհամաձայնության: ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշեց ռազմական դրության ռեժիմն իրականացնելու համար «ԼՂՀ պետական անկախության հիմունքների մասին» սահմանադրական օրենքի 9-րդ բաժնի 3-րդ հոդվածին համապատասխան՝ ստեղծել Պաշտպանության պետական կոմիտե (ՊՊԿ):

ՊՊԿ նախագահ նշանակվեց Ռ. Քոչարյանը, ՊՊԿ նախագահի առաջին տեղակալ՝ ԼՂՀ ՆԽ նախագահի առաջին տեղակալ Բ. Առուշանյանը, ՊՊԿ նախագահի տեղակալ՝ ԼՂՀ ԳԽ նախագահության անդամ, պետական շինարարության, իրավական հարցերի և օրինականության ամրապնդման հանձնաժողովի նախագահ Կ. Բաբուրյանը: ՊՊԿ կազմի մեջ ընդգրկվեցին ԼՂՀ ԳԽ նախագահության անդամ, պաշտպանության և անվտանգության հանձնաժողովի նախագահ Վ. Բալայանը, ԼՂՀ պաշտպանության կոմիտեի նախագահ Ս. Սարգսյանը, ԼՂՀ ներքին գործերի նախարարի պաշտոնակատար Ա. Իսագուլովը, ինքնապաշտպանության ուժերի հրամանատարի առաջին տեղակալ Ս. Բաբայանը:

ՊՊԿ-ին փոխանցվեցին ՆԽ-ի՝ «ԼՂՀ նախարարների խորհրդի մասին» օրենքով նախատեսված բոլոր պարտականությունները, ռազմական դրության ռեժիմի իրականացման այն լիազորությունները, որոնք նախատեսված են «Ռազմական դրության մասին» ԼՂՀ ԳԽ նախագահության 1992 թ. օգոստոսի 13-ի հրամանագրով: ԼՂՀ ԳԽ նախագահության մի շարք լիազորություններ նույնպես փոխանցվեցին ՊՊԿ-ին: ՊՊԿ նախագահն օժտվեց ԼՂՀ ՆԽ նախագահի լիազորություններով: ՊՊԿ նախագահին պարտավորեցվում էր 6 ամիս հետո իր գործունեության հաշվետվությունը ներկայացնել ԳԽ:

Առաջին հայացքից տպավորություն է ստեղծվում, թե կենտրոնացված իշխանական համակարգը այդ դժվար պարագայում պետք է արդարացված լիներ, սակայն հետագայում, պետաշինարարական գործընթացը ուսումնասիրելով և վերլուծելով, հանդիպում ենք մի շարք թերությունների:

Կարծես թվում էր նաև, թե ՊՊԿ-ի ստեղծումով կհարթվի ԼՂՀ օրենսդիր մարմնի եւ ՀՀ ղեկավարության փոխհարաբերությունները, սակայն բանակցային գործընթացում (1992թ. օգոստոսի 27-ի Ալմա Աթայի եւ Սոչիի սեպտեմբերի 19-ի համաձայանգրերը) տեղի ունեցած տարաձայնությունները նորից պատճառ հանդիսացան երկողմ հարաբերությունների վատթարացմանը: Կարելի է ասել, որ բանակցային գործընթացում ՀՀ նախագահը նորից չէր վստահում ԼՂՀ օրենսդիր իշխանությանը: Ուստի հակառակ թևը սկզբնական շրջանում փորձեց ուղիներ որոնել և բարելավել հարաբերությունները ՀՀ իշխանությունների հետ: Այդ առնչությամբ 1992թ. հոկտեմբերի 13-ին ԼՂՀ ԳԽ նախագահության պաշտոնական պատվիրակությունը՝ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանի գլխավորությամբ այցելեց Երևան և հանդիպումներ ունեցավ ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի հետ: Այդ հանդիպումների նպատակն էր պարզել՝ արդյո՞ք փոփոխություններ տեղի չեն ունեցել ԼՂՀ հանդեպ վարած ՀՀ քաղաքականության մեջ, մանավանդ, երբ ԼՂՀ վերաբերյալ վերջին երկու համաձայնագրերը կայացվել էին առանց ԼՂՀ ներկայացուցիչների մասնակցության[4]: Սակայն կարելի է եզրակացնել, որ բանակցություններն անցել են անարդյունք: Պատճառը երևի պարզ է. ՀՀ-ում Արցախյան հիմնախնդիրը պետք է շահարկվեր ներքին կայունությունը պահպանելու համար:

Այդ հանդիպումներից հետո սկսվեց նորից սրվել ԼՂՀ ներքաղաքական դաշտը: Որոշակի տարաձայնություններ արդեն նկատվեցին ՊՊԿ-ի և ԳԽ-ի նախագահության միջև՝ ԼՂՀ օգնության հիմնադրամի ստեղծման վերաբերյալ: Հիմնադրամ ստեղծելու մասին ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը որոշում էր ընդունել դեռևս 1992թ. նոյեմբերի 30-ին, որը նպատակ ուներ կենտրոնացնելու հանրապետությունում մուտք գործող օգնությունը: Այդ առնչությամբ ՊՊԿ-ի նախագահը դեմ դուրս եկավ ԼՂՀ ԳԽ որոշման դեմ[5]: Կարծում ենք ՊՊԿ-ի նախագահի նման վերաբերմունքի պատճառ կարող էր

հանդիսանալ այն, որ հիմնադրամը ստեղծվում էր ԼՂՀ ԳԽ նախագահության վերահսկողության ներքո, իսկ դա արդեն հուշում էր որոշակի ֆինանսական և այլ կախվածություն ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունից:

Հետագայում տարբեր պատճառներով ի հայտ եկան բացահայտ առճակատումներ, որոնք հանգեցրին ինչպես նաև ճնշումների՝ ԼՂՀ ԳԽ-ի նախագահության անդամների եւ ԳԽ-ի որոշ պատգամավորների վրա[6]: Վերլուծելով ստեղծված իրավիճակը՝ կարելի է գալ այն եզրահանգման, որ ՀՀ ղեկավարությունը ՊՊԿ-ի լծակներով փորձում էր նորից պատժել ԼՂՀ ԳԽ նախագահության «անհնազանդ» անդամներին:

1993թ. փետրվարի սկզբներին Արցախի իշխանությունների միջեւ գոյություն ունեցող հակասությունները թևակոխեցին մի նոր շրջան: Փետրվարի 10-ին Ադրբեջանի կողմից ուղղակի ԼՂՀ տարածքի բռնազավթման կապակցությամբ ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը որոշում կայացրեց 3 ամսով մինչև 1993թ. մայիսի 12-ը, երկարաձգել 1992թ. օգոստոսի 12-ի ԼՂՀ ԳԽ-ի նախագահության հրամանագրով ԼՂՀ ողջ տարածքում ռազմական դրության ժամկետը[7]: Նույն որոշմամբ՝ ռազմական դրության հայտարարման կապակցությամբ ստեղծված ՊՊԿ-ն պետք է փետրվարի 18-ին ԼՂՀ ԳԽ-ի նախագահությանը ներկայացներ հաշվետվություն անցած 6 ամսվա ընթացքում կատարած աշխատանքի վերաբերյալ: Ինչպես նաև առաջիկա այդ 2 օրերին ՊՊԿ-ն պետք է ԼՂՀ ԳԽ-ի նախագահությանը հանձներ իր ընդունած որոշումները, կարգադրություններն ու այլ փաստաթղթեր: Փետրվարի 12-18-ը փորձագետները պետք է ճշտեին դրանց օրինականությունը:

Այդ առնչությամբ ՊՊԿ-ի նախագահ Ռ.Քոչարյանը նամակ հղեց ԼՂՀ ԳԽ-ի նախագահությանը, ուր նշված է. «Անհրաժեշտ եմ համարում իմ վերաբերմունքը արտահայտել ԼՂՀ ԳԽ-ի նախագահության «ԼՂՀ ՊՊԿ-ի 6 ամսվա գործունեության մասին» հաշվետվությունը լսելու եւ ԼՂՀ ԳԽ-ի նախագահության «ԼՂՀ-ում ռազմական դրությունը երկարաձգելու հրամանագրի մասին» 1993թ. փետրվարի 10-ին ընդունած որոշման վերաբերյալ:

Մատնանշված փաստաթղթերը վկայում են այնպիսի մի լուրջ հարցի նկատմամբ, ինչպիսին ռազմական դրության մասին հարցն է, մակերեսային մոտեցման մասին:

ԼՂՀ ԳԽ-ի նախագահության ռազմական դրությունը երկարաձգելու ժամկետի անհրաժեշտության մասին մեր կողմից հղված նամակում ձևակերպված են եղել այդպիսի առաջարկության հիմնական շարժառիթները, սակայն դրանք հաշվի չեն առնվել:

Ռազմական դրության եռամսյա ժամկետը ոչ մի կերպ չի կարող նպաստել ռազմական դրության կանոնակարգի, ոչ մի լուրջ ու երկարաժամկետ միջոցառման իրականացմանը, պաղեցնում է ինքնապաշտպանության շարքերում ծառայելու մոբիլիզացվածներին: Ռազմական դրության ժամկետի այդպիսի կարճատև երկարաձգումը դավագրգռում է զորակոչման ենթակա անձանց և նրանց տանում բոլոր ձևերով դրանից խուսափելուն ու սպասողական դիրք գրավելուն: Հատկապես պետք է ընգծել այն պարագան, որ նման որոշումը թյուրիմացության մեջ է գցում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին, միջազգային մյուս կազմակերպություններին և հանրապետության բնակչությանը: Ստեղծվում է Ադր.Հ կողմից իբր ռազմական գործողությունները դադարեցնելու ենթադրյալ տպավորություն: Իսկ Ադրբեջանի բարձրաստիճան ղեկավարների բազմիցս արած հայտարարությունները, մոբիլիզացումը շարունակելը և ռազմաճակատի բոլոր տեղամասերում մարտական գործողությունների ակտիվացումը հաստատում են պատերազմ շարունակելու հաստակ գիծը, որի նպատակը ԼՂՀ ամբողջ տարածքի լրիվ բռնազավթումն է:

Ինչ վերաբերում է ԼՂՀ ԳԽ-ի նախագահության հրամանագրին, որում հիշեցվում է ԼՂՀ ՊՊԿ-ի գործունեության ժամկետի մասին, ապա այդպիսի ժամկետ չի հաստատվել: Ռազմական դրության կարգավիճակի ժամկետը, որն իրականացնելու է կոչված ԼՂՀ ՊՊԿ-ն, երկարաձգվում է, և այդ մասին տեղեկությունը կարող է քննարկվել միայն այդ ժամկետը լրանալուց հետո:

Անհասկանալի է նաև ԼՂՀ ՊՊԿ-ի գործունեության ժամանակահատվածում ըն-

դունված բոլոր կարգադրություններն ու որոշումները ԼՂՀ ԳԽ-ի նախագահությանը ներկայացնելու հարցադրումը: Հաշվի առնելով, որ ՊՊԿ-ն միաժամանակ իրականացնում է և ԼՂՀ ՆԽ-ի դերը, անցած ժամանակամիջոցում ընդունվել են նորմատիվային և օպերատիվ բնույթի մեծ թվով փաստաթղթեր, որոնց մի մասը անհրաժեշտության դեպքում ուղարկվել է ԼՂՀ ԳԽ-ի նախագահություն:

Այսպիսով՝ 6 ամսվա ընթացքում փաստորեն ոչ մի հետաքրքրություն չցուցաբերելով ռազմական դրության կանոնակարգի իրականացման հարցերի նկատմամբ, չփորձելով ՊՊԿ-ին որևէ աջակցություն ցույց տալ՝ նրա առջև կանգնած խնդիրները լուծելու գործում, ԳԽ-ի նախագահությունը ընտրել է նրա վրա այսպես ասած «ներգործելու» անընդունելի ձևը: Եվ վերջապես տարակուսանք է հարուցում ռազմական դրության հարցը՝ առանց ՊՊԿ-ի և ինքնապաշտպանության ուժերի կարծիքը հաշվի առնելու, իսկ առավել ևս՝ առանց դրանց ներկայացուցիչներին հրավիրելու քննարկման դնելը:

Եթե ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը, այնուամենայնիվ, հնարավոր է համարում առանց ՊՊԿ-ի և ԻՊՈՒ-ի ուղղակիորեն լուծել պաշտպանական բնույթի հարցերը, ապա առաջարկում եմ, որ նախագահությունն իր վրա վերցնի ռազմական դրության կանոնակարգի իրականացման գործունեությունը և այստեղից բխող ողջ պատասխանատվությունը»[8]:

Փետրվարի 14-ին ԼՂՀ ԳԽ-ի մանդատային, մարդու իրավունքների, պարկեշտության և ազգությունների մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ հրավիրվեց ԼՂՀ ԳԽ-ի պատգամավորների խորհրդակցություն: Հանդիպման ժամանակ, որին մասնակցել են նաև ԼՂՀ ՊՊԿ-ի և ԻՊՈՒ-ի ղեկավարությունը, առաջարկվեց քննարկել ՊՊԿ-ի լիազորությունների լրանալու և ռազմական դրության ժամկետի երկարաձգման հետ առնչվող հարցեր: ՊՊԿ-ին մոտ շրջանակների ներկայացուցիչները ռազմական դրությունը մինչև պատերազմի ավարտը երկարաձգելու և ՊՊԿ-ին լրացուցիչ լիազորություններ տրամադրելու պահանջներ ներկայացրին[9]:

Միաժամանակ հանրապետության ՁԼՄ-երը սանձարձակ արշավ սկսեցին ԼՂՀ ԳԽ-ին հեղինակազրկելու նպատակով:

Այդ առնչությամբ փետրվարի 17-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ. «Վերջերս ՁԼՄ-ներով քայլեր են ձեռնարկվում հակադրել ԼՂՀ օրենսդիր և գործադիր իշխանություններին, չկշռադատված մեղադրանքներ են հնչում օրինավոր ընտրված ԼՂՀ ԳԽ-ի նախագահության հասցեին:

Պատմության մեջ մեկ անգամ չէ, որ փորձեր են արվել մեր ժողովուրդը երկատել հակամարտող հատվածների, որի հետևանքով նրա լավագույն հատվածը պարբերաբար կամ ոչնչացվել է, կամ տարագրվել: Մենք ողջախոհության ենք կոչում հանրապետության ներքաղաքական իրավիճակի նորմալացմամբ շահագրգիռ բոլոր անձանց և մարմիններին: Ոչ ոք իրավունք չունի մոռանալու, որ ինքը հսկայական պատասխանատվություն է կրում Արցախի և ողջ Հայաստանի ճակատագրի համար: Պատմությունը մեզ եզակի հնարավորություն է ընձեռնել անմնացորդ ավանդ մուծելու ժողովրդի ազատագրման և միավորման գործին, և ոչ ոք չի ների մեզ, եթե ձեռքից բաց թողնենք այդ հնարավորությունը»[10]:

Նույն օրը հրապարակվեց Արցախի ժողովրդական ճակատի վարչության հայտարարությունը: Ընդգծելով ՊՊԿ-ի դրական աշխատանքը՝ ժողովրդական ճակատի վարչությունը օրենսդիր մարմնին մեղադրել է անգործության մեջ[11]: ՊՊԿ-ի հաշվետվությունը լսելու մասին ԳԽ-ի նախագահության որոշումը այդ հայտարարության մեջ բնութագրվել է իբրև «քաղաքական պատվախնդրության» դրսևորում: Փաստաթղթի հեղինակները ԳԽ-ի նախագահությունից պահանջել են անհապաղ որոշում ընդունել ռազմական դրության ժամկետը 3 ամսով երկարաձգելու և «ընդհուպ մինչև պատերազմի ավարտը ռազմական դրության ռեժիմ մտցնելու մասին»: Հայտարարության մեջ պահանջվել է նաև ՊՊԿ-ն վերակազմել Պետական խորհրդի՝ տրամադրելով լրացուցիչ լիազորություններ, և հրավիրել Սահմանադիր ժողով՝ վերջինիս հանձնելով օրենսդրական իշխա-

նությունը: Այդ առնչությամբ առաջարկվել է գումարել ԼՂՀ ԳԽ-ի նստաշրջան:

Նման իրավիճակի պայմաններում ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը փետրվարի 17-ին նամակ հղեց ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանին[12]: Նամակում հաղորդվում էր ՀՀ տնտեսական և քաղաքական իրավիճակի պատճառների, ՀՀ նախագահի և ԼՂՀ օրենսդիր մարմնի փոխհարաբերությունների, ինչպես նաև բանակցային գործընթացում ԼՂՀ դիրքորոշումների անտեսման մասին:

ԼՂՀ ԳԽ-ի նախագահության և ՊՊԿ-ի միջև քաղաքական հակամարտությունը փետրվարի 18-ին մտավ իր վերջին փուլը: ՊՊԿ-ի նախագահ Ռ.Քոչարյանը չներկայացավ ԼՂՀ ԳԽ-ի նախագահության ընդլայնված նիստին, ուր պետք է լսվեր ՊՊԿ-ի 6 ամսյա գործունեության հաշվետվությունը: Նիստին մասնակցող ՊՊԿ-ին մոտ կանգնած շրջանակները միաժամանակ արշավ ծավալեցին պահանջելով առանց ՊՊԿ-ի հաշվետվությունը լսելու վերանայել ռազմական դրությունը 3 ամսով երկարաձգելու որոշումը: Նրանք այն կարծիքին էին, որ ռազմական դրությունը պետք է հայտարարվի մինչեւ պատերազմի վերջը:

Նիստում նաև առաջարկվեց ստեղծել փոքր խորհրդարան կամ ընդլայնված նախագահություն նրա կազմում ընդգրկելով ոչ պատգամավորների: Բացահայտելով նման որոշումների կործանարար էությունը երիտասարդ հանրապետության համար՝ ԳԽ-ի նախագահությունը մերժեց ընդունել որոշումներ, որոնք կարող են հանգեցնել «բռնատիրության» հաստատմանը: Ի վերջո, երկար քննարկումներից և բանավեճերից հետո գործադիր իշխանությունների ներկայացուցիչները ստիպված էին համաձայնելու ողջամիտ միակ տարբերակի հետ՝ հրավիրել նստաշրջան, որը պետք է լսեր ՊՊԿ-ի եւ ԳԽ-ի նախագահության զեկուցումները և որոշ փոփոխությունների ընդգրկումը ԳԽ--կանոնակարգի մեջ: Այն ակնկալվում էր հրավիրել առաջիկա 1 ամսվա ընթացքում, նստաշրջանի հարցերից մեկն էլ պետք լիներ նաև ԼՂՀ ԳԽ-ի ղեկավարության թափուր պաշտոնների համար ընտրությունները:

Այս իրադարձությունների կապակցությամբ ՀՀ ԳԽ-ի մի խումբ պատգամավորներ հրապարակեցին հայտարարություն, որով արտահայտեցին իրենց մտահոգությունը ցավալի միջադեպի առթիվ կատարվածը համարելով Հայաստանի ղեկավարության կոպիտ միջամտության արդյունք, պահանջեցին վերջ տալ ժողովրդավարական եղանակով ստեղծված մարմնի հեղինակության հետ կատարվող խաղին, միասնական ու համերաշխ գործողություն ծավալել ԼՂՀ օրինական պետական մարմնի հովանու ներքո[13]:

Մարտի 21-ին իր աշխատանքը վերսկսեց ԼՂՀ առաջին գումարման ԳԽ-ի առաջին նստաշրջանը՝ 41 պատգամավորների մասնակցությամբ: Օրակարգում էին հետևյալ հարցերը՝ ԼՂՀ ՊՊԿ-ի հաշվետվությունը, ԼՂՀ ամբողջ տարածքում ռազմական դրության ժամկետի մասին, ԼՂՀ ԳԽ-ի ժամանակավոր կանոնակարգում և ԼՂՀ ԳԽ-ի մասին օրենքում փոփոխություններ մտցնելը, ԼՂՀ ԳԽ-ի նախագահի և նախագահի տեղակալի ընտրությունները, ԼՂՀ ԳԽ-ի նախագահության հրամանագրերի և օրենսդրական ակտերի ուղղությամբ որոշումների հաստատումը:

ՊՊԿ-ի հաշվետվությունը ներկայացրեց ՊՊԿ նախագահ Ռ.Քոչարյանը[14]: ԼՂՀ ԳԽ-ի նախագահության հաշվետվությամբ հանդես եկավ ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանը[15]: Նա անդրադարձավ պետականության ձևավորման խնդիրներին, ինչպես նաև նշեց օրենսդիր և գործադիր մարմինների միջև առկա տարաձայնությունների առարկայական և ենթաառարկայական պատճառները[16]:

Մարտի 22-ին աշխատանքները շարունակեց ԼՂՀ առաջին գումարման ԳԽ-ի առաջին նստաշրջանը: Առավոտից սկսվեց ԳԽ-ի նախագահի թեկնածությունների առաջադրումները: Ի վերջո առաջադրվեց 4 թեկնածու. Բորիս Առուշանյան՝ ԼՂՀ ՆԽ-ի փոխնախագահ, Արկադի Մանուչարով՝ ԼՂՀ ԳԽ-ի պատգամավոր, Լևոն Մելիք-Շահնազարյան՝ ԼՂՀ ԳԽ-ի մշտական հանձնաժողովի նախագահ և Գրիգոր Հայրապետյան՝ Հադրութի շրջխորհրդի նախագահ:

Ա.Մանուչարովը և Լ.Մելիք-Շահնազարյանը հանեցին իրենց թեկնածությունները, որից հետո մյուս թեկնածուները ներկայացրին իրենց ծրագրերը: Դրան հետևեց

քվեարկությունը: Արդյունքում Բ.Առուշանյանը հավաքեց 17, իսկ Գ.Հայրապետյանը՝ 20 ձայն: Վերջինս էլ անցավ հաջորդ փուլ, ուր, սակայն, նրա օգտին նորից գրանցվեց 20 ձայն, իսկ ընտրվելու համար անհրաժեշտ էր 27-ը:

Դրանից հետո հնչեցին տարբեր առաջարկներ՝ նախագահության կազմն ընդլայնելուց մինչեւ ԳԽ-ն ընդհանրապես ցրելն ու նոր ընտրություններ անցկացնելը: Որոշվեց անցկացնել քաղաքական տարբեր ուժերի խորհրդատվական հանդիպում փոխզիջման գնալու տարբերակով: Հանդիպումից հետո հայտարարվեց, որ համաձայնություն է ձեռք բերվել առաջադրել Լ.Մելիք-Շահնազարյանի թեկնածությունը, սակայն քիչ անց պարզվեց, որ այդ պայմանավորվածությունն էլ գործել չի կարող: Իր ելույթում ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանը անհանդուրժելի համարեց ստեղծված կացությունը և, նշելով տարածաշրջանում ու Ռուսաստանում քաղաքական գործընթացների սրընթաց զարգացումը՝ կարևորեց նախագահի ընտրության անհրաժեշտությունը: Նա հայտնեց, որ հակառակ դեպքում ինքը վաղը հրաժարական կտա:

Որոշում կայացվեց նաև մինչև տարեվերջ ԼՂՀ տարածքում ռազմական դրությունը երկարաձգելու մասին: Նույն ժամանակով երկարաձգվեց ՊՊԿ-ի գործունեությունը[17]:

Մարտի 23-ին ԼՂՀ ԳԽ-ի նստաշրջանում քվեարկության դրվեցին նախագահի պաշտոնի համար առաջադրված 2 թեկնածությունները՝ Լ.Մելիք-Շահնազարյան եւ Վալերի Ալեքսանյան: Քվեարկության առաջին փուլում Լ.Մելիք-Շահնազարյանը ստացավ 18, իսկ Վ.Ալեքսանյանը՝ 20 քվե: Վերջինիս թեկնածությունը դրվեց կրկնակի քվեարկության: Նրա օգտին քվեարկեց 22 պատգամավոր: Այսպիսով ոչ մեկին չհաջողվեց հավաքել ձայների անհրաժեշտ քանակություն: ԳԽ-ի նստաշրջանը որոշեց Գ.Պետրոսյանին թողնել ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար մինչև ապրիլի վերջը, այնուհետև կրկին անդրադառնալ այդ հարցին: Սակայն ապրիլի վերջին քվորում չլինելու պատճառով այն չկայացավ, որոշում կայացվեց նիստը անցկացնել ԳԽ-ի կրկնակի և նոր ընտրությունների անցկացումից հետո: Իսկ կրկնական և նոր ընտրությունները նախատեսված էր անցկացնել 1993թ. մայիսին[18]:

Այսպիսով՝ ուսումնասիրելով պետաշինարարական գործընթացները և վերլուծելով ստեղծված ներքաղաքական իրավիճակը՝ կարող ենք եզրակացնել, որ ՊՊԿ-ի գործունեությունը թելադրվում էր հիմնականում Հայաստանի ՀՀՇ-ական իշխանությունների կողմից: Ինչպես նաև նկատեցինք՝ ԼՂՀ պետական ինքնուրույնությունը բանակցային գործընթացում որոշակի չափով էլ սահմանափակվեց, Արցախը զրկվեց որևէ ինքնուրույն քաղաքական քայլ կատարելու հնարավորությունից: Կարծում ենք, որ նաև ՀՀ ղեկավարության ազդեցության և հովանավորության հետևանքով խորացվեց ներքին պառակտումը, հետզհետե սահմանափակվեց ժողովրդավարական ձևով ընտրված մարմնի՝ ԳԽ-ի գործունեությունը, որի կարգավիճակը հետագայում դարձավ ձևական:

Վերջում կարելի նշել, որ հետագայում ԳԽ-ի նոր ընտրություններից հետո 1995թ. հունիսի վերջին և հուլիսի սկզբին ԼՂՀ ԳԽ նախագահության որոշ «անհնազանդ» անդամներ Լ.ՏերՊետրոսյանի ու նոր իշխանականների հրամանով ձերբակալվեցին[19]: Տարբեր մեղադրականներով ձերբակալվեցին ԼՂՀ ԳԽ-ի նախագահի նախկին պաշտոնակատար Գ.Պետրոսյանը, ԼՂՀ ԳԽ-ի քարտուղար Վ.Հակոբյանը, արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Լ.Մելիք-Շահնազարյանը, պաշտպանության և անվտանգության հանձնաժողովի նախագահ Վ.Բալայանը: Սակայն մեղադրականների բացակայության պատճառով, անցնելով խոշտանգումների ու ծաղրանքի միջով, վերջիններս բաց թողնվեցին: Մինչդեռ 1994թ. դեկտեմբերին ձերբակալվեց ԼՂՀ ԳԽ-ի մամլո քարտուղար Գ.Բաղդասարյանը, որը նույն բախտին արժանացավ[20]:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԼՂՀ պետական արխիվ, ֆ. 254, g. 1, պ. մ. 4, կ. 1, թ. 22-23:
2. Հակոբյան Տ., ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994թթ.), Եր., 2011, էջ 123:
3. ԼՂՀ պետարխիվ, Ֆ.254, g.1, պ.մ.4, կ.1, թ. 44-47:
4. «Երկիր» 30.10.1992:
5. «Արցախ», 19.12.1992:
6. ԼՂՀ առաջին գումարման ԳԽ քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու հանգուցյալ Վ.Հակոբյանի անձնական արխիվ:
7. ԼՂՀ պետարխիվ, Ֆ.254, g.1, պ.մ.7, կ.1, թ. 52-53:
8. «Արցախ»,18.02.1993:
9. «Երկիր», 17.02.1993:
10. ԼՂՀ պետարխիվ, Ֆ.254, g.1, պ.մ.7, կ.1, թ. 66-67:
11. Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն: Եր., 1997. էջ 615:
12. «Երկիր», 23.02.1993:
13. «Երկիր», 19.02.1993:
14. ԼՂՀ պետարխիվ, Ֆ.254, g.4, պ.մ.2, կ.1, թ. 41-50:
15. Նույն տեղում, թ. 59-65:
16. «Երկիր», 23.03.1993:
17. Հարությունյան Վ. Բ., Իրադարձություններ Լեռնային Ղարաբաղում, Ժամանակագրություն, V մաս, Եր., 1997, էջ 47:«Երկիր», 24.03.1993թ.:
18. «Արցախ», 29.04.1993:
19. “Экспресс-хроника”, 22.09.95г.
20. ԼՂՀ առաջին գումարման ԳԽ քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու հանգուցյալ Վ.Հակոբյանի անձնական արխիվ:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի և պաշտպանության պետական կոմիտեի փոխհարաբերությունները (1992թ. օգոստոս - 1993թ. մարտ)

Տարոն Հակոբյան

Արցախյան գոյապայքարի այդ ծանր ժամանակահատվածում, թվում էր, թե ՊՊԿ-ի ստեղծումով ԼՂՀ-ում կհանդարտվեին ներքաղաքական հակասությունները, ինչպես նաև կբարելավվեին հարաբերությունները ՀՀ ղեկավարության հետ: Սակայն Ալմա Ա-թայի եւ Սոչիի համաձայնագրերը ցույց տվեցին հակառակը, որ ՀՀ իշխանությունները դեռ չէին վստահում ժողովրդավարական հիմունքներով ստեղծված մարմնին: Այդ ամե-նը պատճառ հադիսացավ, որ նորից լարվեն փոխհարաբերությունները ԼՂՀ օրենսդիր մարմնի և ՀՀ ղեկավարության միջեւ: Ստեղծված իրավիճակը անդրադարձավ նաև ԼՂՀ ներքին կայունության վրա՝ ստեղծելով ներքաղաքական ծայրաստիճան լարված դրություն, որը կարող էր նաև սպառնալ երկրի պետական անվտանգությանը: Սակայն հետագա դեպքերի սպառնալից զարգացումից խույս տալու նպատակով, ինչը կարող էր ճակատագրական լինել, ԼՂՀ ԳԽ նախագահությունը փորձեց նորից ուղիներ որոնել դուրս գալու ստեղծված կացությունից:

РЕЗЮМЕ

Взаимоотношения Верховного Совета Нагорно-Карабахской республики и Государственного Комитета Обороны (август 1992- март 1993)

Тарон Акопян

Ключевые слова: Верховный Совет НКР, Государственный Комитет Обороны НКР, арцахский конфликт, Совет министров НКР, переговорный процесс, силы самообороны.

В указанный тяжелый период Арцахской борьбы казалось, что с созданием ГКО будут устранены внутриполитические противоречия, а также улучшатся отношения с руководством РА. Однако Алма-Атинские и Сочинские соглашения показали, что власти РА пока не доверяют органу, созданному на демократической основе. Все это стало причиной нового обострения взаимоотношений между законодательным органом НКР и руководством РА. Создавшаяся ситуация отразилась и на внутренней стабильности в НКР, создав крайне напряженную внутриполитическую ситуацию, что могло бы стать угрозой для государственной безопасности страны. Однако с целью предотвращения дальнейшего опасного развития событий, что могло сыграть роковую роль, президиум ВС НКР попытался найти новые пути для выхода из создавшейся ситуации.

SUMMARY

The Interrelations of the Nagorno-Karabakh Republic Supreme Council and State Defense Committee (August 1992 – March 1993)

Taron Hakobyan

Keywords: the NKR Supreme Council, the NKR State Defense Committee, Artsakh conflict, the NKR Council of Ministers, negotiation process, self-defense forces.

In this complicated period of the Artsakh conflict, it seemed that the formation of the State Defense Committee would resolve the internal political contradictions and improve the relations with the authorities of the Republic of Armenia. But the Alma-Ata and Sochi agreements revealed the fact that the RA authorities didn't trust the democratically formed body. It resulted in new aggravations of interrelations between the legislative body of the NKR and the leadership of the RA. The situation affected inner stability of the NKR and created an extremely tensed internal political situation which could threaten the state security. However, having the aim to prevent further dangerous development of the events which could be fatal for the state, the Presidium of the NKR SC tried to find new ways of overcoming the existing situation.